

մէջ, ուր կայ աղբիւր մը: Տրապիզին փոքր մասը դուռը դրաւած է մզկիթի վերածման ժամանակ մեծ այլանդակութիւններու և փոփոխութիւններու ենթարկուած է: Այսպիսի փոփոխութիւններ Խաչակիրներու գործին ուրիշ շատ մը գեղեցիկ կտորներուն ողբալի պատմութիւնը կը յիշեցնեն:

Ս. Յարութեան եկեղեցիին խոյակները բիւզանդական կեռանտի նման խիստ գեղեցիկ խոյակներ են, ինչպէս որ Յրանսայի մէջ ԺԳ. դարու բազմաթիւ դուռներու վրայ կը գտնուին, մասնաւորապէս Mantesի դուռներուն վրայ, որ մեծ նմանութիւններ ունին այս եկեղեցիին խոյակներուն հետ: Անոնցմէ մին ունի տեսակ մը փոքր տերեւներով գօտի մը, որուն նմանները կը տեսնուին Mantesի եւ Charliauի մէջ: Ուրիշ մը ունի փոքր ծակերով կիտանիշ կողմով տերեւներ. մանրամասնութիւն մը՝ որ կը գտնուի Saint-Lomer de Bloisի մէջ:

Այս խոյակները կողոված և մասին մօտ ունին հազիւ նըշմարելի ուռոյց մը: Կոճերը (astragales) սիւնագլխի մասերը կը կազմեն:

Թակաղակները ունին ցցուակակիր վերին եզերք մը և նեղ շեղեզ մը քանդակագործեալ, բայց շատ ստորին խոյակներու քանդակներէն: Հոն կը տեսնուին սաղարթանկարներ և խոյօղներ. հիւսիսի կողմը՝ պտուղ մը, կեռանտի խոյօղ մը, ուրիշ խոյօղ մը, մարդկային գլուխ մը, կարիճ մը: Հարաւի կողմը՝ կը գտնուին պատկերներ բոլորովին նման անոնց՝ որ կը զարդարեն Chatillon-Sur-Cherի թակաղակներու խորոփը: Կտրատուած գլուխ մը, թռչուն մը եւ գառնուկ մը կը յիշեցնեն գլուխները այն խոյերուն որ կը զարդարեն Կ. Պոլսի, Վենետիկի Ս. Մարկոսի թանգարաններուն բիւզանդական շատ մը խոյակներու անկիւնները:

Բայց տեսնուած այս գառնուկը հոս ունի խորհրդանշական իմաստ մը, վասն զի թակաղակին երեսներուն վրայ, ձախին կեցած յուշկապարիկ մը իր Ժպիտովը կը ջանայ մոլորեցնել զայն, մինչ առջին առիւծ մը կը ջանայ վախցնել զայն՝ իր մոնչիւններով. այսպէս սպառնալիք և մոլորանք կը ճգնին քրիստոնեան ուղիղ ճանապարհէն մոլորեցնել: Այս գառնուկը՝ քիչ մը կոշտ շինուած քով, կը թուի օժտուած ըլլալ աւելի շատ նուազ ոգիով քան թէ տոաքինութեամբ: